

ՍԱՂՄՈՍ 18

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Տերը փառաբանվում է փրկություն տալու համար	Աստված Գերիշխան Փրկիչը	Թագավորը գոհանում է պատերազմի մեջ հաղթության համար (Արքայական Գոհություն, տես՝ 2 Թագ. 22:1-3)	Դավթի հաղթության երգը	Թագավորի Գոհությունը
<u>MT ներածություն</u>				
«Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը. այս խոսքերն ասաց այն օրը, երբ ՏԵՐԸ նրան ազատեց իր թշնամիների և Սավուղի ձեռքից»				
18:1-3	18:1-3	18:1-3	18:1-3 18:2-3	18:1 18:2 18:3
18:4-6	18:4-6	18:4-5 18:6	18:4-6	18:4-5 18:6
18:7-15	18:7-12 18:13-15	18:7-15	18:7-15	18:7-8 18:9-10 18:11-12 18:13-14 18:15
18:16-19	18:16-19	18:16-19	18:16-19	18:16-17 18:18-19
18:20-24	18:20-24	18:20-24	18:20-24	18:20-21 18:22-23 18:24-25
18:25-29	18:25-27 18:28-30	18:25-30	18:25-27 18:28-29	18:26-27 18:28-29
18:30-36			18:30-34	18:30

	18:31-34	18:31-42		18:31-32
				18:33-34
	18:35-36		18:35-42	18:35-36
18:37-42	18:37-42			18:37-38
				18:39-40
				18:41-42
18:43-45	18:43-45	18:43-45	18:43-45	18:43
				18:44-45
18:46-50	18:46-49	18:46-48	18:46-50	18:46-47
				18:48
		18:49-50		18:49
	18:50			18:50

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 18:1-3
¹Քեզ եմ սիրելու, ո՞վ ՏԵՐ, իմ գորություն:
²ՏԵՐՆ իմ վեմն է, իմ բերդն ու իմ ազատարարը,
Իմ Աստվածը, իմ գորությունը, ես Նրան եմ վստահելու.
Նա իմ վահանը, իմ փրկության եղջյուրն ու իմ բարձր աշտարակն է:
³Ես ՏԻՐՈՉՆ եմ կանչելու, *Ու* արժանի է փառաբանության ,
Այդպես պիտի փրկվեմ իմ թշնամիներից:

18:1-3 Սաղմոսերգուն դիմում է իր Աստծուն մի շարք հզոր անուններով և ակնարկներով (միևնույն բանաստեղծությունը գտնվում է 2 Թագավորաց 22-ում): Կյանքի ճնշումների մեջ նա գիտերաստեղծագործության և փրկության Աստծո անփոփոխ բնավորությունը: Ուշադրություն դարձրեք «իմ» ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ մեջ անձնական տարրը:

1. իմ զորություն – BDB 305, KB 304, ԳՈՅԱԿԱՆ է միայն այստեղ և հավանաբար բաց է թողնվել 2 Թագ. 22:2-ում:
2. իմ վեմ (երկու անգամ) – երկու տարբեր եբրայերեն արմատներ
ա. BDB 700 I – տես՝ Սաղմ. 31:3, 42:9, 71:3
բ. BDB 849 – տես՝ 2 Օր. 32:4, 15, 30
3. իմ բերդ – BDB 845 II, KB 622, տես՝ Սաղմ. 31:3, 71:3, 91:2, 144:2
4. իմ ազատարար – BDB 812, KB 930, *Piel* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 40:17, 70:5, 144:2
5. իմ Աստված (*El*) որում ես պատասպարվում եմ – BDB 340, KB 337, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 2:12, 5:11, 7:1, 11:1, 16:1, 25:20, 31:1, 37:40, 57:1, 61:3, 64:10, 71:1, 118:8-9, 141:8, 143:9, 144:2, Առակ. 30:5:
6. իմ վահան – BDB 171, KB 545 I, տես՝ Սաղմ. 3:3, 7:10, 18:30, 35, 28:7, 33:20, 59:11, 84:11, 115:9-11, 119:114, 144:2, Առակ. 2:7, 30:5
7. իմ փրկության եղջյուրը
ա. «եղջյուր» (BDB 901) – զորության կամ ուժի դարձվածք, տես՝ Սաղմ. 75:10
բ. «եղջյուր» կարող է նաև նշանակել «բլուր», տես՝ Եսայի 5:1, եթե այդպես է, ուրեմն բերդի կամ աշտարակի նույն տեսարանն է (NIDOTTE, հատոր 3, էջ՝ 991):
8. իմ աշտարակ – BDB 960 I, KB 640, տես՝ Սաղմ. 9:9, 46:7,11, 48:3, 59:9,16,17, 62:2,6, 94:22, 144:2
9. ՏԵՐԸ, ով արժանի է փառաբանության – BDB 237, KB 248, *Pual* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 48:1, 96:4, 145:3

Ապահովության, պաշտպանության և անվտանգության այս խոսքերի հավաքական արդյունքը հզոր է և էմոցիոնալ: Ընկած աշխարհում կյանքը դժվար է, անարդար, և անկանխատեսելի, սակայն ահա մենք ունենք Աստված, որը ճիշտ հակառակն է:

18:1 «սիրել» Այս բառը (BDB 933, KB 1216, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) միևնույն եբրայերեն արմատն է (ծոր) ինչպես «արգանդը», սակայն նախքան այս բառի մեջ շատ իմաստ տեղավորելը, այս նույն արմատը նաև նշանակում է «անգր»: Չզուշացե՛ք ստուգաբանությունից որպես նշանակության միակ աղբյուրը: Համատեքստն է որոշում իմաստը:

Այս ԲԱՅԻ *Qal* արմատը կարելի է միայն այստեղ գտնել և վերաբերում է Աստծո հանդեպ մարդու սիրուն: *Piel* արմատը ավելի տարածված է և կիրառվում է ուխտի մեջ մտած մարդկության հանդեպ Աստծո գթառատության վերաբերյալ (տես՝ Ելից 33:19, 2 Օր. 13:17, 30:3, Ես. 14:1, 27:11, 30:18, 49:10,13, 54:8, 10, 55:7, 60:10):

Այս ԲԱՅԸ 2 Թագավորաց 22-ում համագործ է և BDB կարծում է, որ այն ավելացվել է հավանաբար, երբ սաղմոսը համայնքի համար պատարագային է դարձել:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 18:4-6

⁴Մահվան ցավերն ինձ պատեցին,
Անաստված մարդկանց հեղեղներն ինձ վախեցրին:

⁵Դժոխքի լարերն ինձ պաշարեցին,
Մահվան որոգայթներն ինձ հասան:

⁶Նեղությանս մեջ ՏԻՐՈՋԸ կանչեցի ու իմ Աստծուն աղաղակեցի.
Նա Իր տաճարից լսեց իմ ձայնը,
Ու իմ աղաղակը հասավ Նրա առաջ՝ Նրա ականջին:

18:4-5 Սաղմոսերգուն նկարագրում է իր անհանգստությունը վառ, հանգավորված, պոետիկ լեզվով.

1. մահվան ցավերը՝ չվանները (այսինքն՝ որոգայթներ, տես՝ Առակ. 13:14, 14:27) ինձ պատեցին – BDB 67, KB 79, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ 116:3. հնարավոր է, որ «չվանները», հետևելով 2 Թագավորաց 22-ին, պետք է հասկացվի որպես «ալիքներ», որոնք ձևավորում են լավ գուգահեռներ պոետիկալի հաջորդ տողի համար: NIDOTTE, հատոր 1, էջ՝ 482, նշում է, որ DSS (IQH/այսինքն՝ Մեռյալ Ծովի Գալարը MS/ 3:28, 5:39) կիրառում է ԲԱՅԸ Աստծուն գոհություն մատուցելու, որ իրեն ազատեց՝

ա. «մահվան ցավերից»

բ. «Բելիարի գետերից»

Սա այստեղ համապատասխանում է նաև համատեքստի հետ:

2. Բելիարի հեղեղները (BDB 116, տես՝ Նաում 1:15, 2 Կորնթ. 6:15) ինձ վախեցրին – BDB 129, KB 147, *Piel* ԱՆԿԱՏԱՐ. ԲԱՅԸ հաճախ է կիրառվում Հորի գրքում (տես՝ Հոր 3:5, 9:34, 13:11,21, 15:24, 18:11, 33:7): 2 Թագ. 22:5-ում «Բելիարը» թարգմանված է «կործանում», որը ցույց է տալիս, որ այն կարող է լինել ոչ անձնական:
3. *Շեղի*/դժոխքի/ լարերը (տես՝ Հատուկ Թեմա. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ) ինձ պաշարեցին – BDB 685, KB 738, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 17:11, 22:12, 16, 49:5, 88:17, 118:10-12
4. մահվան որոգայթները ինձ հասան – BDB 869, KB 1068, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 18:18, Հոր 30:27:

Ինչպես որ «իմ» դերանունը գերակշռում էր Սաղմոս 18:1-3-ում, այժմ էլ «ինձ» դերանունը որպես հարձակման առարկա է գերակշռում Սաղմ. 18:4-5: Յուրաքանչյուր մարդ վախենում է մահից, մինչև որ ունենում են անձնական հանդիպում Աստծո կյանքի և սիրո հետ (տես՝ 1 Հովհ. 4:7-21): Սատանան չի՝ վերահսկում մահը, սակայն նա խոշորացնում է մահվան վախը:

18:6 Սաղմոս 18:6-ը սաղմոսերգուի պատասխանն է մոտալուտ մահվան իր զգացողությանը (այսինքն՝ «անհանգստությունը», BDB 856 II, տես՝ Հոր 15:24, 38:23, Սաղմ. 66:14, 119:143):

1. Ես կանչեցի ՏԻՐՈՋԸ – BDB 894, KB 1128, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
 2. իմ Աստծուն աղաղակեցի – BDB 1002, KB 1443, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
- Նրա աղոթքները պատասխանվեցին.

1. Նա Իր տաճարից լսեց իմ ձայնը:

2. իմ աղաղակը հասավ Նրա առաջ՝ Նրա ականջին (տես՝ Սաղմ. 6:8-9, 28:2,6)

Ուշադրություն դարձրեք 1 և 2, և ապա 3 և 4 տողերի միջև զուգահեռությունը: Այս հոմանիշ հանդիսացող զուգահեռականությունը բնորոշ է եբրայական պոեզիային (տես՝ Ներածական Հոդվածը): Պաշտպանության Աստվածը նաև աղոթքներին պատասխանող Աստված է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 18:7-15

**⁷Այն ժամանակ երկիրը ցնցվեց ու դողաց,
Ու լեռների հիմերը շարժվեցին ու սասանվեցին,
Քանի որ Նա բարկացել էր:**

**⁸Նրա ռունգերից ծուխ ելավ, իսկ բերանից՝ ոչնչացնող կրակ,
Դրանից կայծակներ բռնկվեցին:**

⁹Նա խոնարհեցրեց երկինքներն ու ցած իջավ.

Նրա ոտքերի տակ խավար էր:

¹⁰Քերովբեի վրա հեծավ ու թռավ,

Այո, սլացավ հովի թևերով:

¹¹Խավարն Իրեն ծածկույթ դարձրեց,

Մուր ջրերն ու երկնքի թանձր ամպերը՝ Իրեն բնակարան:

¹²Նրա ներկայության պայծառ լույսից ամպերը,

Կարկուտով ու հրե ածուխներով վերացան:

¹³ՏԵՐԸ նաև երկնքում որոտաց,

Եվ Բարձրյալը լսեցրեց Իր ձայնը՝

Կարկուտով ու հրե ածուխներով:

¹⁴Հիրավի, Նա Իր նետերն արձակեց ու ցրեց դրանք,

Եվ կայծակներ ուղարկեց ու խափանեց նրանց:

¹⁵Քո հանդիմանությամբ, ո՛վ ՏԵՐ,

Քո ռունգերի շնչի պոռթկումից ջրերի հատակները երևացին

Ու հայտնվեցին աշխարհի հիմերը:

18:7-15 Այս պարբերությունը նկարագրում է Աստծո պատասխանը սաղմոսերգուի աղոթքին: Աստված բարձրանում է գործելու համար (այսինքն՝ [1] սուրբ պատերազմի տեսարան կամ [2] վեր է կենում Իր գահից):

1. Սաղմ. 18:7-ում հավատարիմ հետևորդի անհանգստությունը՝ նեղությունը արթնացնում է Աստծո բարկությունը (BDB 354, KB 351, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Հատուկ Թեմա. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ): Այս վառվող բարկությունը (երկրաշարժի տեսարանը, տես՝ Եսայի 29:6) բնութագրվում է Սաղմ. 18:8-ում (այսինքն՝ որոտի տեսարանը, տես՝ 2 Օրինաց 33:26, Ես. 29:6): Հնարավոր է այս տեսարանը արտացոլում է Ելից 19:18-19 (այսինքն՝ Սինա լեռան վրա Մովսեսի հետ ուխտ կապելը):
2. ՅԱՀՎԵԻ պատասխանը բնութագրվում է որոտի տեսարանում՝ Սաղմ. 18:9-15:
 - ա. խոնարհեցրեց երկինքները (տես՝ Եսայի 64:1): REB չեղյալ է համարում այս արտահայտությունը և տալիս՝ «Նա պատռեց երկինքները»: Այս նույն տեսարանը արտացոլվում է Եսայի 34:4, Հայտն. 6:12-14:
 - բ. իջավ ցած թանձր խավարով
 - գ. մութ ջրերով
 - դ. երկնքի թանձր ամպերով
 - ե. Նրա ներկայության պայծառ լույսով
 - զ. կարկուտով ու հրե ածուխներով
 - է. երկնքում որոտներով
 - ը. կայծակներով
 - թ. ջրերի հիմքերը՝ հատակը երևացին

Այս նկարագրությունը շատ կերպերով ակնարկում է *Շեխինայի* փառքի ամպը անապատում դեգերելու շրջանում՝ ՅԱՀՎԵԻՆ թե՛ ծածկելու և թե՛ հայտնելու համար (տես՝ Ելից 13:21-22, 19:19-20,24, 16:10, 19:9,16, 24:15-18, 40:34-38):

18:7 «երկիրը ցնցվեց ու դողաց» Մեկնաբանության հարցն այս է. «Արդյո՞ք սա բառացի է պետք հասկանալ, թե փոխաբերական իմաստով»:

1. Բառացի – երկրաշարժի տեսարան է, որպես Աստծո մոտալուտ ներկայության նշան՝ Ելից 19:18, Սաղմ. 68:7-8
2. փոխաբերական – «երկրի» անձնավորում
 - ա. երկիրը ծնեց՝ Ծննդ. 1:12, 24
 - բ. երկիրը նրանց կույ տվեց՝ Ելից 15:12, Թվոց 16:34
 - գ. երկիրը դուրս թքեց՝ Ղևտ. 18:25,28, 20:22
 - դ. երկիրը իր բերանը բացեց՝ Թվոց 16:32, 26:10, 2 Օր. 11:6, Սաղմ. 106:17
 - ե. երկիրը որպես վկա՝ 2 Օր. 4:26, 30:19, 31:28, 32:1
 - զ. երկրի խոսքը՝ Հոբ 12:8, 16:18, Սաղմ. 50:4
 - է. երկիրը կբարձրանա նրա դեմ՝ Հոբ 20:27
 - ը. երկիրը աղաղակում է՝ Հոբ 31:38
 - թ. երկիրը փառաբանում է ՅԱՀՎԵԻՆ՝ Սաղմ. 69:34
 - ժ. երկիրը ցնծում է՝ Սաղմ. 96:11, 97:1
 - ի. երկիրը դողաց՝ Դատ. 5:4, 1 Թագ. 14:15, Ես. 13:13
 - լ. երկիրը սգում է՝ Ես. 24:4, 33:9, Ովս. 4:3

18:8 «կրակ» Տե՛ս Հատուկ Թեմա. Կրակ

18:9 «Նա ցած իջավ» ՅԱՀՎԵՆ ապրում է երկնքում: Նրա ներկայությունը ապրում է ուխտի տապանակի վրա *քերովքեների* միջև, սակայն ժամանակ առ ժամանակ Աստվածաշունչը խոսում է Նրա մարդկանց տեսքով հատուկ կերպերով հայտնվելու՝ գալու մասին (այսինքն՝ թեոֆանիա-աստվածհայտնություն, տես՝ Ելից 3): Ելից 3:7-8-ը հատուկ օրինակ է ՅԱՀՎԵԻ կողմից Իր ժողովրդի կարիքին պատասխանելու և նրանց օգտին գործելու: Այս համատեքստում տեսարանը նկարագրված է որպես սաստիկ որոտ:

18:10-11 Սա նկարագրում է ՅԱՀՎԵԻՆ որոտի տեսարանում: Անձրևը կարևոր էր կիսա-անապատի բնակիչների համար, սակայն փոթորիկը ահագին էր: Իսրայելի պատմության մեջ, այն բանից հետո, երբ նրանք մտան Քանան, Իսրայելացիները դարձան պտղաբերության աստվածների թիրախը, հատկապես *Բահադի*՝ փոթորկի աստծո, անձրև և պտղաբերություն տվողի: Սակայն իրական «փոթորկի Աստվածը» ՅԱՀՎԵՆ էր (ուշադրություն դարձրե՛ք Ելից 19-ի տեսարանը):

18:10 «քերովբե» Ուշադրություն դարձրե՛ք Սաղմոս 104:3-ի գուգահեռ տեսարանը: Տե՛ս Հատուկ Թեմա. ՀՄԱ-ում պտղաբերության պաշտամունքը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔԵՐՈՎԲԵՆԵՐ
SPECIAL TOPIC: CHERUBIM

Ա. Հրեշտակային էակների մի քանի տեսակներից մեկը: Այս հատուկ տեսակը պահպանում էր սուրբ վայրերը (տես՝ Ելից 25:18-22, 3 Թագ. 8:6-7):

Բ. Ստուգաբանությունը հայտնի չէ.

1. Աստծո և մարդու միջև արքայերենի «բարեխոս» կամ «միջնորդ» բառից:
2. Եբրայերենից սա հավանաբար բառախաղ է «կառք /chariot/» և «հրեշտակ, քերովբե /cherub/» բառերի (տես՝ Եզեկ. 1, 10)
3. Ոմանք ասում են դա նշանակում է «հրաշափառ, պայծառ արտաքին՝ տեսք»

Գ. Ֆիզիկական տեսքը. Աստվածաշնչում իրարից տարբերվող նկարագրությունների և հնագույն Մերձավոր Արևելքում գտնված տարբեր կենդանակերպ-մարդկանց պատկերների պատճառով սա դժվար է հաստատելը: Ոմանք կապում են նրանց.

1. Միջագետքի թևավոր ցուլի հետ
2. Եգիպտոսի թևավոր արծվառնյունների հետ, որոնք կոչվում են «գրիֆներ»
3. Տիվրոսի թագավորի գահատեղի Քերամում՝ թևավոր արարածների հետ
4. Եգիպտոսի Սֆինքսի և նմանատիպ պատկերների հետ, որոնք գտնվել են Աքքաթ Թագավորի Սամարիայի փղոսկրե պալատում

Դ. Ֆիզիկական նկարագրությունը

1. Քերովբեն Մերովբեին իր տեսքով կապված լինելու հատվածը՝ Եսայի 6 գլուխ:
2. Նրանց տարբեր կերպարանքների օրինակներ՝

ա. Դեմքերի քանակը

- 1) Երկու՝ Եզեկ. 41:18
- 2) Չորս՝ Եզեկ. 1:6,10, 10:14,16,21,22
- 3) Մեկ՝ Հայտն. 4:7

բ. Թևերի քանակը՝

- 1) Երկու՝ 3 Թագ. 6:24
- 2) Չորս՝ Եզեկ. 1:6,11, 2:23, 10:7,8-21
- 3) Վեց (Եսայի 6:2-ի Մերովբեի պես)՝ Հայտն. 4:8

3. Այլ կերպարանքներ.

ա. Մարդու ձեռքեր՝ Եզեկ. 1:8, 10:8,21

բ. Ոտքեր

- 1) Ուղիղ՝ առանց ծնկի. Եզեկ. 1:7
- 2) Հորթի ոտքեր՝ Եզեկ. 1:7

4. Ֆլավիոս Չոզեֆուսը ընդունում է, որ ոչ ոք չգիտի թե ինչպիսին են քերովբեները (տես՝ *Հրեաների Հնությունները*, VIII:3:3):

Ե. Աստվածաշնչյան վայրերը և նպատակները.

1. Կենաց ծառի պահապանները, Ծննդ. 3:24 (հավանաբար փոխաբերորեն կիրառված Սատանայի համար Եզեկ. 28:14,16)

2. Խորանի պահապանը

ա. Ուխտի Տապանակի վրա՝ Ելից 25:18-20, Թվոց 7:89, 1 Թագ. 4:4

բ. Վարագույրի և ծածկոցի վրա պատկերված՝ Ելից 26:1,31, 36:8,35

3. Սողոմոնի Տաճարի պահապանը
 - ա. Սրբության Սրբոցում երկու մեծ փորագրված Բերովբեները՝ 3 Թագ. 6:23-28, 8:6-7, 2 Մնաց. 3:10-14, 5:7-9
 - բ. Ներքին սրբարանի պատերի վրա՝ 3 Թագ. 6:29,35, 2 Մնաց. 3:7
 - գ. Սաքրման թաշտերին միացված պանելների վրա՝ 3 Թագ. 7:27-39
4. Եզեկիելի Տաճարի Պահապանը
 - ա. Պատերի և դռների վրա փորագրված՝ Եզեկ. 41:18-20,25
5. Աստվածության փոխադրամիջոցի հետ կապված.
 - ա. հավանաբար քամու համար փոխաբերություն՝ 2 Թագ.22:11, Սաղմ.18:10, 104:3-4, Ես.19:1
 - բ. Աստծո գահի պահապանը՝ Սաղմ. 80:1, 99:1, Ես. 37:16
 - գ. Աստծո շարժական գահի կառքի պահապանը՝ Եզեկ. 1:4-28, 10:3-22, 1 Մնաց. 28:18
6. Հերովդեսի Տաճարը
 - ա. Նկարված պատերի վրա (այսինքն՝ պահապան, տես՝ Թալմուդ “Yoma” 54ա)
7. Հայտնության գահի տեսարանը (այսինքն՝ պահապան, տես՝ Հայտն. 4-5):

18:15 «աշխարհի հիմերը» Այս տեսարանը արտահայտվում է որպես՝

1. երկրի սյուները՝ 1 Թագ. 2:8, Հոր 9:6, 38:4-6, Սաղմ. 75:3, 104:5
2. լեռների հիմերը՝ 2 Օր. 32:22, Հոր 28:9, Հովնան 2:6
Հնարավոր է, որ համար 15-ը ակնարկում է ՅԱՀՎԵԻ փրկության մեծ գործը՝
ա. արձակ՝ Ելից 14:21-22, 29
բ. պոեզիա՝ Ելից 15:8, Սաղմ. 106:9

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 18:16-19

- ¹⁶Բարձրից ուղարկեց ու վերցրեց ինձ
Եվ շատ ջրերից հանեց ինձ:**
- ¹⁷Իմ գորեղ թշնամուց ու ինձ ատողներից ազատեց ինձ,
Որ ինձնից ավելի գորավոր էին:**
- ¹⁸Իմ նեղության օրը դեմս կանգնեցին,
Բայց ՏԵՐՆ իմ նեղուկն էր:**
- ¹⁹Եվ ինձ հանեց մի լայնարձակ տեղ.
Փրկեց ինձ, քանի որ հավանել էր ինձ:**

18:16-19 Այս բարբերությունը նկարագրում է ՅԱՀՎԵԻ սաղմոսերգուին ազատելը՝ փրկելը: Նաև նկատեք համար 6-ի «նեղությունը» այժմ հստակեցվում է որպես «ինձ ատողները, որ ինձնից ավելի գորավոր էին: Իմ նեղության օրը դեմս կանգնեցին» (տես՝ Սաղմ. 59:16-17):

1. Բարձրից ուղարկեց և վերցրեց ինձ, տես՝ Սաղմ. 144:7
2. Շատ ջրերից հանեց ինձ, տես՝ Սաղմ. 32:6
3. Իմ գորեղ թշնամուց ազատեց ինձ
4. Ինձ ատողներից ազատեց ինձ
5. Ինձ հանեց մի լայնարձակ տեղ՝ ազատության դարձվածք, տես՝ Սաղմ. 4:1, 31:8, 118:5
6. Փրկեց ինձ, քանի որ հավանել էր ինձ, տես՝ 2 Թագ. 22:20, Սաղմ. 37:23, 41:11, 147:11

18:16 «Շատ ջրերից հանեց ինձ» Այս արմատը՝ *נשׁו* (BDB 602, KB 642) գտնվում է միայն (1) այստեղ /և դրա համազորը՝ 2 Թագ. 22:17-ում/ և (2) Ելից 2:10-ում Մովսեսի փրկվելու պատմության մեջ: Այն դարձավ «Մովսես» անվան համար հայտնի ստուգաբանություն:

- «Շատ ջրեր» արտահայտությունը կարելի է երկու կերպ հասկանալ՝
1. անախորժության, խնդիրների, հարձակումների համար համատեքստային փոխաբերություն (տես՝ Սաղմ. 32:6, 46:1-3, 69:1-2, 124:1-5, 144:5-8, Ես. 43:2):

2. Ծննդոցում քառսի մեջ ՅԱՀՎԵԻ ջրերին հաղթելու պատմության ակնարկ (տես՝ Սաղմ. 74:13-14, 89:9-10, 104:6-7, Ես. 51:9-10, տես՝ *Չերոսի Սուրբգրային Մեկնություն*, էջ՝ 578, և իմ գրառումը Ծննդ. 1:2, «անդունդը»՝ Ծննդոց 1-11-ում www.freecommentary.org):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 18:20-24

²⁰ՏԵՐՆ իմ արդարության համեմատ է վարձատրում ինձ,

Իմ ձեռքերի մաքրության համեմատ է հատուցում ինձ:

²¹Քանի որ ՏԻՐՈՋ ճամփաները պահեցի

Ու իմ Աստծուց ամբարշտությամբ չհեռացա:

²²Քանի որ Նրա բոլոր դատաստաններն իմ առջև էին,

Ու Նրա պատվիրաններ ինձնից չեմ հեռացրել:

²³Նաև Նրա առջև ուղիղ եղա

Ու զգուշացա իմ անօրենությունից:

²⁴Ուստի ՏԵՐՆ ինձ հատուցեց իմ արդարության համեմատ,

Իմ ձեռքերի մաքրության համեմատ, որ Նրա այքերի առջև է:

18:20-24 Նկատելք Սաղմոս 18:20-ի *ներառումը* համեմատած Սաղմ. 18:24-ի հետ: Այս պարբերությունը չպետք է հասկանալ որպես սաղմոսերգուի կողմից իր անմեղության կամ կատարելության հայտարարություն: Աստվածաբանորեն նա պնդում է իր «անարատությունը» (տես՝ Հատուկ Թեմա. Անմեղ, անարատ, անախալական, առանց նախատինքի):

Ուշադրություն դարձրե՛ք յուրաքանչյուր զույգի զուգահեռականությունը՝

1. իմ արդարության համեմատ
2. իմ ձեռքերի մաքրության համեմատ
3. ես պահեցի ՏԻՐՈՋ ճամփաները
4. իմ Աստծուց ամբարշտությամբ չհեռացա
5. Նրա բոլոր դատաստաններն իմ առջև էին (#5 և #6-ի համար տես՝ Հատուկ Թեմա. Աստծո հայտնության համար տերմիններ):
6. Նրա պատվիրաններ ինձնից չեմ հեռացրել
7. Նրա առջև ուղիղ եղա
8. զգուշացա իմ անօրենությունից

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՍԻՆԱԿԱՆ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ
SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH

Ա. Բացման սահմանումներ

1. Այս հասկացությունը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն՝ Ծննդոց 1, Եդեմի Պարտեզը):
2. Մեղքը և ապստամբությունը թուլացրեցին կատարյալ փոխհարաբերության այս կարգավիճակը (այսինքն՝ Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխհարաբերության վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ այսինքն՝ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27):
4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով՝
 - ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
 - բ. զոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացիների 1-7)
 - գ. աստվածահաճո օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային՝
 - ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես՝ Հովհ.1:1-14, Կող.1:13-17, Եբր. 1:2-3)
 - բ. որպես մեղքի համար կատարյալ զոհ (տես՝ Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դառնում՝

- ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես՝ Հռոմ. 4:3,6,8, 11,22,23,24, Հակ. 2:23)
- բ. աստիճանաբար Սուրբ Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
- գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Հռոմ. 8:28-30, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 4:13, 1 Թեսաղ. 3:13, 4:3, 5:23, 2 Թեսաղ. 2:13, Տիտ. 2:14, 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
- 7. Երկինքը Եդեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես՝ Հայտն. 21:2) սրբագործված երկիր (տես՝ 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
 - ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
 - բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
 - գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես՝ Եսայի 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ երբայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:
2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիզմներ*, գրքի, էջ՝ 94-99 /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*).
 - ա. *shalom* (BDB1022, KB 1532)
 - բ. *thamam* (BDB1070, KB 1743)
 - գ. *calah* (BDB478, KB 476)
3. Սեպտուագինտան (այսինքն՝ առաջին դարի եկեղեցու Աստվածաշունչը) երբայերեն այս հասկացությունները թարգմանում է Կոյնե Հունարեն տերմինների, որոնք կիրառվում են ՆԿ-ում (տես՝ ցածր Գ. կետը)
4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ
 - ա. *amōmos* (BDB 1071, տես՝ Ելից 29:1, Ղևտ. 1:3,10, 3:1,6, Թվոց 6:14)
 - բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական հասկացությունը
 - ա. Երբայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես՝ Եփես. 5:27, Փիլ. 2:15, 1 Պետ. 1:19)
 - բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես՝ 1 Կորնթ. 1:8, Կող. 1:22)
2. Քրիստոսն է անմեղ, անբիժ և անարատը (*amōmos*, տես՝ Եբր. 9:14, 1 Պետ. 1:19)
3. Քրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես՝ Եփես. 1:4, 5:27, Փիլ. 2:15, Կող. 1:22, 2 Պետ. 3:14, Հուդա 1:24, Հայտն. 14:5)
4. Այս հասկացությունը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար
 - ա. *anegklētos*, «առանց դատապարտության» (տես՝ 1 Տիմ. 3:10, Տիտոս 1:6-7)
 - բ. *anepileptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատինքի» (տես՝ 1 Տիմ. 3:2, 5:7, 6:14, Տիտոս 2:8)
5. «Անարատ» հասկացությունը (*amiantos*) կիրառվում է՝
 - ա. Քրիստոսի համար (տես՝ Եբր. 7:26)
 - բ. Քրիստոնյայի ժառանգության համար (տես՝ 1 Պետ. 1:4)
6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» հասկացությունը (*holoklēria*) (տես՝ Գործք 3:16, 1 Թեսաղ. 5:23, Հակ. 1:4)
7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» հասկացությունը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես՝ Ղուկ. 1:6, Փիլ. 2:15, 3:6, 1 Թեսաղ. 2:10, 3:13, 5:23)

8. «Մեղադրանքի ենթակա չինելու» հասկացությունը փոխանցվում է *amōmētos* (տես՝ 2 Պետ. 3:14)

9. «Անբիծ» «անարատ» հասկացությունը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես՝ 1 Տիմ. 6:14, Հակ. 1:27, 1 Պետ. 1:19, 2 Պետ. 3:14)

Դ. Երբայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս հասկացության իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Քրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու:

Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հռչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Քրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես՝ 1 Հովհ. 1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես՝ Եփես. 4:1,17, 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես՝ Մատթ. 5:20,48, Եփես. 1:4, 1 Պետ. 1:13-16), Աստծո սրբությանը, ոչ միայն օրինապես, այլ բացառապես:

18:20 «Նա հատուցում է ինձ» Այս ԲԱՅԸ (BDB 996, KB 1427) կրկնվում է պարբերության ավարտին (տես՝ Սաղմ. 18:24): Անհավատության համար կան հետևանքներ, սակայն, փառք Աստծուն, կան օգուտներ հավատարիմ հետևորդի համար: Դրանք բարձրաձայնվում են հաջորդ պարբերության մեջ (Սաղմ. 18:25-29):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 18:25-29

²⁵Ողորմածի հետ ողորմած ես,

Ուղիղ մարդու հետ՝ ուղիղ:

²⁶Մարուրի հետ մարուր ես,

Իսկ ծուռի հետ գոտեմարտում ես:

²⁷Քանի որ Դու կփրկես հեզ ժողովրդին,

Իսկ անբարտավան աչքերը՝ կիտնարիեցնես:

²⁸Քանի որ Դու կվառես իմ ճրագը:

Իմ ՏԵՐ Աստված կլուսավորի իմ խավարը:

²⁹Քանի որ Քեզանով արշավում եմ մի գորագնդի վրա

Ու իմ Աստծով ցատկում եմ պարսպի վրայով:

18:25-29 Սրանք հրաշալի, երկնային հետևանքներ են, որոնք հետևում են հավատարիմ հավատացյալին:

1. «Ողորմածի հետ (BDB 339) ողորմած ես» (BDB 338, KB 336, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ, այս համարը և դրա գուգահեռը 2 Թագ. 22:26-ում միակ տեղերն են ՀԿ-ում, որ այս հատուկ ուխտի ԳՈՅԱԿԱՆԻ՝ *hesed*, ԲԱՅԱԿԱՆ կազմությունը հանդիպում են. տես՝ Հատուկ Թեմա. Գթասրտություն): Նկատե՛ք որ «հետ» (ծ) ծանոթացնում է Սաղմ. 18:25-26 հատվածը, մինչդեռ «քանի որ» (չ) ծանոթացնում է Սաղմ. 18:27-29:
2. «Ուղիղ (BDB 1071, տես՝ Սաղմ. 18:23) մարդու հետ ուղիղ» (BDB 1070, KB 1752, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Հատուկ Թեմա. Անմեղ, անարատ, անսխալական, առանց նախատիների):
3. «Մարուրի հետ (BDB 140, KB 162, *Niphal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Ես. 52:11) մարուր ես» (BDB 140, KB 162, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ): Ուշադրություն դարձրե՛ք Սաղմ. 18:26 և 27-ի հակասական գուգահեռականությանը:
4. «Ծուռի հետ (BDB 786 I) գոտեմարտում ես (BDB 836, KB 990, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ)»: «Ծուռ» բառը արդարի հակահիշն է, որն ցույց է տալիս ուղիղը, տես՝ Հատուկ Թեմա. Արդարություն:

5. «Քանի որ Դու կփրկես (BDB 446, KB 448, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) հեզ/նեղյալ ժողովրդին»: Աղբատ կամ նեղյալ ժողովուրդը հակադրված է ամբարիշտ մարդկանց հետ: Տես՝ Հատուկ Թեմա. Փրկություն (ՀԿ):
6. «Իսկ ամբարտապան այքերը (BDB 926, KB 1202, *Qal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Ես. 2:11, 5:15) կխոնարհեցնես» (BDB 1050, KB 1631, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ): Ուշադրություն դարձրե՛ք Սաղմ. 18:27-ի և հակասական զուգահեռականությունը (2 Թագավորաց 22 համագորը մի փոքր տարբեր է):

Այս պարբերությունը հաստատում է աստվածաշնչյան հիմնական մի ճշմարտություն, որ մարդը հնձում է այն, ինչ ցանում է (տես՝ Հոր 34:11, Սաղմ. 28:4, 62:12, Առակ. 24:12, Ժող. 12:14, Երեմ. 17:10, 32:19, Մատթ. 16:27, 25:31-46, Հռոմ. 2:6, 14:12, 1 Կորնթ. 3:8, 2 Կորնթ. 5:10, Գաղ. 6:7-10, 2 Տիմ. 4:14, 1 Պետ. 1:17, Հայտն. 2:23, 20:12, 22:12):

18:28-29 Սաղմ. 18:25-27-ի կազմությունը փոխվում է Սաղմ. 18:28-29-ում: Սաղմոսերգուն մի քանի հայտարարություններ է կատարում ՅԱՀՎԵԻ գործերի վերաբերյալ:

1. «Քանի որ Դու կվառես (BDB 21, KB 24, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) իմ ճրագը (BDB 632, 2 Թագավորաց 22:29 տալիս է «Դու ես իմ ճրագը»):
2. ՅԱՀՎԵՆ՝ իմ Աստվածը կյուսավորի (BDB 618, KB 667, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, համագոր զուգահեռականություն ԲԱՅԵՐԻ համար) իմ խավարը (ենթակաները հակասական զուգահեռականության մեջ, այսինքն՝ ճրագը հակադրված խավարի հետ):
3. «Քանի որ Քեզանով ես արշավում եմ (այսինքն՝ հաղթում եմ) զորագնդի վրա (BDB 151 I, այսինքն՝ զորամաս): Որոշ անգլերեն թարգմանություններ վերցնում են 7173 (BDB 151) «ափի» իմաստով և թարգմանում մի արտահայտություն, որը համագոր է «պատի վրայով ցատկերուն» (տես՝ REB, NIB): LXX տարբերակը (այսինքն՝ *Սեպտուագինտայի Նոր Անգլերեն Թարգմանությունը*, 2007) տալիս է ընդհանրապես տարբեր արտահայտություն՝ «քանի որ քո մեջ ես կփրկվեմ ծովահենների ցանցից»: LXX-ի 1970թ-ի թարգմանությունը տալիս է ավանդական տարբերակը: UBS Տեքստային Նախագիծը «զորագունդ» բառի համար տալիս է “A” գնահատական (մեծ հավանականություն): 2 Թագավորաց 22-ում զուգահեռը նույնպես տալիս է «զորագունդ»:

AB-ն կարծում է «զորագունդ»-ը, որը կարելի է գտնել միայն այստեղ, պետք է լիներ «ուժ» 73, որը նաև զուգահեռվում է հաջորդ տողի հետ:

4. Իմ Աստծով ցատկում եմ պարսպի վրայով: 3 և 4 կետերը համագորներ չեն, սակայն երկու տարբեր կերպեր են ցույց տալու Աստծո զորացնող ուժը մարդու ներսում:

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 18:30-36

- ³⁰Աստծո ճամփան կատարյալ է,
ՏԻՐՈՋ խոսքերը փորձված են:
 Նա բոլոր Իր հուսացողների ասպարն է,
³¹Քանի որ ՏԻՐՈՋԻՑ գատ, ո՞վ կա Աստված,
 Կամ մեր Աստծուց բացի, ո՞վ է վեմ:
³²Աստված է, որ ինձ զորություն է հազցնում
 Ու իմ ճամփան կատարյալ է դարձնում:
³³Իմ ոտքերը նմանեցնում է եղջերուի ոտքերին
 Ու կանգնեցնում է ինձ իմ բարձր տեղերի վրա:
³⁴Ձեռքերս պատերազմելու է վարժեցնում,
 Այնպես որ պղնձե աղեղը կտարվում է իմ բազուկներով:
³⁵Նաև Քո փրկության վահանն ինձ տվեցիր,
 Քո աջ ձեռքն ինձ զորացրեց
 Եվ Քո քնքշությունն ինձ մեծ դարձրեց:
³⁶Լայնացրիր իմ գնալու ճանապարհը,
 Որպեսզի իմ ոտքերը չսայթաքեն:

18:30-36 Այս պարբերությունը բացատրում է, թե ինչու է սաղմոսերգուն ՅԱՀՎԵԻՆ տալիս Սաղմոս 18:2-ի անունները: Նրա գործողություններից են բխում այս անունները՝

1. Աստծո ճամփան անարատ է (բառացի՝ «լիարժեք» կամ «կատարյալ», BDB 1071, տես՝ Սաղմ. 18:23,30,32):
2. Նրա խոսքը՝ խոստումը (BDB 57, կիրառված է 19 անգամ Սաղմոս 119-ում) փորձված է կամ ստուգված (BDB 864, KB 1057, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐ, տես՝ 2 Թագավորաց 22:31, Սաղմ. 119:140, Առակաց 30:5): Տե՛ս տեսանյութեր «Աստծո Խոսքի վստահելիությունը» www.freebiblecommentary.org քարոզներում Լեյքսայդ Սկրտական Եկեղեցուց, Դալլաս, Տեխասից:
3. Նա վահան է (BDB 171, տես՝ Սաղմ. 18:2)
4. Նա վե՛մ է (BDB 849, տես՝ Սաղմ. 18:2)
5. Ինձ հագնում է (BDB 25, KB 28, *Piel* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 18:39) գորություն (BDB 298, հոմանիշ է BDB 305 Սաղմ. 18:2-ում):
6. Իմ ճամփան կատարյալ է դարձնում (BDB 1071, տես՝ Սաղմ. 18:23, 30, 32):
7. Նա իմ ոտքերը նմանեցնում է (BDB 763, KB 840, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) եղջերուի ոտքերին (այսինքն՝ հաստատուն կանգնող ոտքերի, որոնք կարող են ապահով քայլել խորհուրդի, քարքարոտ տեղերում, տես՝ Ամբ. 3:19):
8. Նա վարժեցնում է, սպառազինում է սովորեցնում է ինձ պատերազմելու, տես՝ Սաղմ. 144:1
9. Նա տվել է ինձ Իր փրկության վահանը, տես՝ Սաղմ. 18:2
10. Նրա աջ ձեռքը ինձ գորացրեց, տես՝ Սաղմ. 63:8, 119:117 (աջ ձեռքը գորավոր գործողության դարձվածք է, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԵՌԶ):
11. Նրա քնքշությունը/ հեզությունը (BDB 855 II, տես՝ 2 Թագ. 22:36, նաև՝ Առակ. 15:33, 18:12, 22:4) ինձ մե՛ծ է դարձնում:
12. Նա լայնացնում է (BDB 931, KB 1210, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) իմ գնալու ճանապարհը (այսինքն՝ գուգահեռ է 18:19, Սաղմ. 4:1, 12:5, 31:8, 118:5): NIDOTTE, հատոր 1, էջ՝ 317 ունի լավ տեղեկություն՝ «Ի՞նչն է հաստատ, որ այնտեղ, որտեղ լայնարձակություն է, այն նկատի ունի փրկությունը, նեղ ճանապարհը՝ խորհրդանշում է նեղությունն ու վտանգը»:
13. Նա կարողություն է տալիս սաղմոսերգուին, որ նրա ոտքերը չսայթաքեն (BDB 588, KB 609, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, այսինքն՝ ճանապարհի մեջ մնալը, տես՝ Սաղմ. 18:20-24, տես՝ Սաղմ. 1:1-ի գրառումը արահետ՝ ճանապարհի համար):

18:31 «ՏԻՐՈՉԻՑ գատ, ո՛վ է Աստված» Սա ակնարկ է միաստվածությանը: Տես Հատուկ Թեմա. Միաստվածություն:

18:35

NASB, NKJV	«հեզություն»
NRSV	«օգնություն»
JPSOA	«հոգածություն»
NASB, JPSOA	
ծանոթագրություն	«զիջողություն»
REB, NAB	«կռանալ»
LXX	«խրատ»

Եբրայերեն արմատը «զիջողություն» է (BDB 776, 𐤒𐤆) կամ «հեզություն» (BDB 776, 𐤒𐤆): BDB սատարում է երկրորդ տարբերակը (NASB), սակայն UBS տեքստային նախագիծը առաջին տարբերակին գնահատում է «B» (որոշակի կասկածներ, տես՝ NRSV):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 18:37-42

³⁷Հետապնդեցի իմ թշնամիներին ու նրանց հասա

Ու հետ չդարձա՝ մինչև նրանց ապառվելը:

³⁸Նրանց հարվածեցի, ու այլևս կանգնել չկարողացան:

Նրանք իմ ոտների տակ ընկան,

³⁹Քանի որ պատերազմի համար ինձ գորություն հագցրիր,

Վրաս բարձրացողներին իմ ձեռքի տակ ծնկի բերիր:

⁴⁰Իմ թշնամիների պարանոցներն ինձ տվեցիր,

Որպեսզի ինձ ատողներին կործանեմ:

⁴¹Աղաղակեցին, բայց նրանց փրկող չկար .

ՏԻՐՈՋԸ կանչեցին, բայց նրանց պատասխան չտվեց:

⁴²Ու հողմափոշու պես մանրեցի նրանց

Եվ փողոցների ցեխի պես մի կողմ գցեցի:

18:37-42 Այս պարբերությունը սաղմոսերգուի նկարագրությունն է, թե ինչպես է նա ՅԱՀՎԵԻ օգնությամբ՝ գորացմամբ, հաղթում իր թշնամիներին: Դարձյալ, հայտնի չէ, թե ովքեր էին այս թշնամիները, սակայն Սաղմ. 18:41 ակնարկում է, որ նրանք հայրենակից իսրայելացիներ էին (այսինքն՝ Սավուդի բանակը, Աբիսողոմը, կամ այլ ապստամբներ):

1. Ես հետապնդեցի իմ թշնամիներին
2. Ես նրանց հասա
3. Եվ հետ չդարձա՝ մինչև նրանց սպառվելը
4. Նրանց հարվածեցի
ա. նրանք չկարողացան կանգնել
բ. նրանք իմ ոտքերի տակ ընկան
5. Ինձ հագցրեցիր (այսինքն՝ պատրաստեցիր գործողության համար) գորություն պատերազմի համար
6. Իմ ձեռքի տակ ծնկի բերիր նրանց
7. Իմ թշնամիների պարանոցները ինձ տվեցիր
8. Ինձ ատողներին կործանեցի
9. Հողմափոշու պես մանրեցի նրանց
10. Փողոցների ցեխի պես մի կողմ գցեցի (տես՝ 2 Թագ. 22:43, Միքիա 7:10)

Նկատեք, որ դրանցից մի քանիսը նկարագրում են Դավթի գործողությունները, իսկ մյուսները՝ ՅԱՀՎԵԻ կողմից նրան գորացնելու գործողությունները:

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 18:43-45

⁴³Ժողովրդի կռիվներից ազատեցիր ինձ

Ու ինձ հեթանոսների գլուխ դարձրիր:

Ժողովուրդը, որին չէի ճանաչում, ինձ է ծառայելու:

⁴⁴Իմ մասին լսելուն պես՝ հնազանդվելու են ինձ .

Օտարները խոնարհվելու են իմ առաջ:

⁴⁵Օտարները թուլանալու են

Եվ սարսափելու են իրենց թաքստոցներում:

18:43-45 Այս պարբերությունը գործ ունի Իսրայելի Թագավորի հետ՝ ազգերի համար ՅԱՀՎԵԻ ծրագրերում: Իսրայելը (Սաղմ. 18:43ա-ի «ժողովուրդը») նշանակված էր ազգերին տեղեկացնելու և նրանց դեպի ՅԱՀՎԵԻ հավատքին քաշելու (տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկագործության ծրագիրը): Սակայն նկատե՛ք, որ Իսրայելը «կռվախնդիր» էր (տես՝ Սաղմ. 35:1):

Ուշադրություն դարձրեք տարբեր արտահայտությունների, որոնք ուղղված են ոչ իսրայելացիներին (այսինքն՝ հեթանոսներին):

1. Իսրայելի Թագավորը (տես՝ Սաղմ. 18:50) դրվում է ազգերի գլուխ
2. ազգերը մի ժողովուրդ էին, որին Թագավորը չէր ճանաչում, սակայն հիմա նրանք ծառայում (BDB 712, KB 773, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) են իրեն:
3. հենց այս ազգերը լսում են Թագավորին, նրանք՝
ա. հնազանդվում են (BDB 1033, KB 469, *Piel* ԱՆԿԱՏԱՐ)

բ. ենթարկվում են (բառացի՝ «ստել» կամ «խաբել», սակայն այստեղ կիրառված է «նվաստացում» իմաստով, հավանաբար՝ «նիհարություն» կամ նրանց թվի կամ ազդեցության պակասության իմաստով: Եբրայերեն ԲԱՅՆ ունի երկու իմաստն էլ) – BDB 471, KB 469, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

գ. թուլանալ – BDB 615, KB 663, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

դ. սարսափել – BDB 353, KB 350, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, միայն այստեղ է ՀԿ-ում՝ իրենց թաքստոցներում (հավանաբար «գիրություն» BDB 689 կամ KB 604, «բանտ»՝ տես Միքիա 7:17):

Ուշադրություն դարձրեք, որ ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻՆ (իննը), որոնք մատնանշում են շարունակվող գործողություն (այսինքն՝ հաղթանակը շարունակվում է):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 18:46-50

⁴⁶ՏԵՐՆ ապրում է. օրհնյա՛լ լինի իմ վեճը,

Եվ իմ փրկության Աստվածը թող մեծարվի:

⁴⁷Աստված է, որ լուծում է իմ վրեժը

Ու ժողովրդին հնազանդեցնում է ինձ:

⁴⁸Իմ թշնամիներից փրկում է ինձ.

Հիրավի, Դու ինձ իմ հակառակորդներից ավելի բարձրացրիր

Ու բռնակալ մարդուց ազատեցիր ինձ:

⁴⁹Սրա համար, ո՛վ ՏԵՐ, հեթանոսների մեջ գոհություն են հայտնելու Քեզ

Եվ փառաբանություններ են երգելու անվանդ:

⁵⁰Մեծ փրկություն է տալիս Նա Իր թագավորին

Ու ողորմություն է ցույց տալիս Իր օծյալին՝

Դավթին ու նրա սերնդին հավիտյանս հավիտենից:

18:46-50 Այս պարբերությունը սաղմոսերգուի գոհությունն էուղղված ՅԱՀՎԵԻՆ Նրա բնավորության և գործերի համար: Ուշադրություն դարձրե՛ք ՅԱՀՎԵԻ անուններին և բնութագրականներին:

1. ապրում է – սա ԱԾԱԿԱՆ (BDB 311) է, որը բխում է «լինել» ԲԱՅԻՑ (BDB 217), որը ՅԱՀՎԵԻ նշանակությունն է (տես՝ Հատուկ Թեմա. Աստծո անունները): Նա մշտնջենավորն է, մշտապես ապրողն է: «ՏԵՐՆ ապրում է» արտահայտությունը սովորաբար երդման նախաբան է, սակայն այստեղ այն ներկայացնում է դրքստոգիա՝ Աստծուն օրհներգության, մեծարման խոսք:

2. իմ վեճը – մատնանշում է գորություն և կայունություն (տես՝ Սաղմ. 18:2, 31):

3. Իմ փրկության Աստվածը (יְהוָה)

4. Նա գործում է Թագավորի համար

ա. վրեժխնդիր է լինում (BDB 668)

բ. հնազանդեցնում է ժողովուրդներին

գ. ազատում է (տես՝ Սաղմ. 18:50)

դ. բարձրացնում է նրան իր թշնամիների վրա

ե. փրկում է նրան բռնակալ մարդուց

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչ է անելու Իսրայելի Թագավորը այս լույսի ներքո:

1. գոհություն է հայտնելու հեթանոսների մեջ

2. Նրա անվանը փառաբանություն է երգելու

Թագավորը անելու այս բաները՝

1. ՅԱՀՎԵԻ բերած փրկության համար

2. ՅԱՀՎԵԻ կողմից հավիտյանս Թագավորին և իր սերունդներին ցուցաբերած գթասրտության համար (տես՝ 2 Թագավորաց 7):

18:49 Այս համարը (կամ 2 Թագ. 22:50) կիրառվում է Պողոսի կողմից Հռոմ. 15:9-ում՝ ցույց տալու, որ ՅԱՀՎԵԻ փրկության ծրագիրը հենց սկզբից ներառել է հեթանոսներին (տես՝ Ծանոթ. 1:26-27, 12:3, Ել. 19:5-6):

Պողոսը նաև կիրառում է 2 Օր. 32:43, Սաղմ. 117:1 և Եսայի 11:10: Միշտ էլ փրկության ծրագիրը եղել է ամբողջ մարդկության համար (տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը):

18:50 «Նրա օծյալը» Տես՝ Հատուկ Թեմա. Մեսիա

❖ **«ողորմություն»** Տես՝ Հատուկ Թեմա. Գթասրտություն

❖ **«հավիտյան»** Տես՝ Հատուկ Թեմա. Հավիտյան

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք Աստծո անունները Սաղմ. 18:2-ից:
2. Սաղմ. 18:7-15-ում Աստված որպես ի՞նչ է նկարագրվում:
3. Ինչպե՞ս կվերնագրեիք Սաղմ. 18:16-19:
4. Արդյո՞ք Սաղմ. 18:20-ը սովորեցնում է «գործերով արդարություն»:
5. Որտե՞ղ է «վեմ» անունը կիրառվել Աստծո համար, որից բխել է այս կիրառությունը: (Սաղմ. 18:2,31, 46 և 2 Օր. 32:4, 31):
6. Ի՞նչ է ակնարկում Սաղմ. 18:43-45: